Պարույր Սևակ

Էշը

Ով ստեղծեց գազաններին,
Թռչողներին, վազաններին,
Ամեն մեկին անուն դրեց,
Անուն դրեց
Ու խնդրեց՝
Չմոռանալ անունն իրենց:
Եվ ցրվեցին ու հեռացան,
Անունն իրենց չմոռացան:
Միայն մեկը եկավ ձորից,
Իր անունը հարցրեց նորից:
Ստեղծողը քնքշանքով
Ասաց. «Էշ է անունը քո»:
Էշը գնաց:
Երկու օրից
Վերադարձավ էշը նորից.
Մոռացել էր իր անունը:
Նորի՛ց գնաց,
Եկավ նորի՛ց,
Ու կրկնվեց նորից նույնը.
Մոռացել էր իր անունը:
«Քո անունը Էշ է, Իշուկ:

Երկու տառ է, ո՞նց չես հիշում»:
Բայց այդպես էլ նա չհիշեց,
Ու ետ եկավ մի օր նորից:
Եվ այս անգամ մի լա՛վ քաշեց
Ստեղծողը ականջներից:
Քաշեց, ասաց. «Անունդ Է՛շ է»,
«Անունդ Է՛շ է»,- ասաց, քաշե՛ց:
Եվ այն օրից խելոք էշը
Իր անունը արդեն հիշեց.
Էլ հարցնելու կարիք չկար,
Բայց ականջը... մնաց երկար: